| | | | |
|---|---|---|---|
| | նյութի գրառում, բանավոր խոսքի ճարտարություն և արտահայտման հստակություն: | շրջանակում տարածելու: | կիրառում: |
| Ամսագրային հոդված | Ունենալով խմբագրման և ֆորմատավորման հստակ ուղենիշներ՝ ամսագրային հոդվածները ձևավորող կամ ամփոփիչ գնահատման լավ գործիք են: | Ներգրավող և գրավիչ ձևաչափ: Հնարավորություն է ընձեռում զարգացնելու գիտական գրավոր խոսքի մեթոդները: | Իրականում չափազանց պարտադրական ձևաչափ ունի: |
| Մատենագիտական (գրականության) ցանկ՝ անոտացիաներով | Գրականության ուսումնասիրման գործընթացի հիմնավորման ձևաչափ: Ուսումնասիրված համապատասխան գրականության համառոտ տեքստային ամփոփում: | Սահմանված նյութերի ուսումնասիրության և գնահատման ամենաարդյունավետ ձևաչափ: | Գիտելիքի համադրման և ընկալման սահմանափակ շրջանակ: |
| Գրականության ուսումնասիրություն | Առկա գրականության ուսումնասիրությունների/ հետազոտական նախագծերի պաշտոնական ձևաչափ: Որպես կանոն, կապվում է կոնկրետ թեմաների և ոչ թե սահմանված տեքստերի հետ: | Ճկուն և անհատականացվելի: | Որոշ առումով տեքստակենտրոն է՝ ավելի շատ շարադրման և խմբագրման շեշտադրումով, քան համադրման և ընկալման: |
| Հետազոտական պաստառ | Մեկ էջից կազմված պաստառի պատրաստում, որը հասանելի ձևով կներկայացնի հետազոտական բարդ տվյալները: | Գաղափարների արտացոլման և տարբեր ոլորտներում գիտելիքի ու տեղեկատվության ուսումնասիրման հնարավորություն: Արդյունքները հնարավոր է տարածել: | Հնարավոր է, որ պահանջվի լրացուցիչ ձևավորում, տեսողական նյութերի պատրաստման գրագիտություն, համակարգչային ծրագրերի իմացություն և դրանց կիրառման հմտությունների զարգացում: |
| Բլոգ կամ վիքի | Քայլառքայլ կամ համագործակցային եղանակով կատարված առցանց աշխատանքների գնահատում: Ընդհանուր առմամբ, պակաս պաշտոնական է, քան ավանդական կրթական գրավոր առաջադրանքների դեպքում: | Վիքի էջերը կարող են մշակվել համագործակցային տարբերակով և խթանել խմբային աշխատանքը: Բլոգների բաց ձևաչափը, ինչպես նաև մեկնաբանություններ անելու և պատասխաններ գրելու համապատասխան շրջանակը խթանում է ջանքերի մեծ կենտրոնացում | Ուսանողների կատարած աշխատանքի բաց ձևաչափը կարող է հուզական առումով բարդ լինել սովորողների համար: |
| Փորձնական հետազոտության ֆինանսավորման հայտ | Առաջնորդվելով ֆինանսավորման որոշակի ուղենիշներով՝ սովորողներն իրենց հետազոտական գաղափարները ձևավորում են գնահատման տրված շրջանակի միջոցով: | Խրախուսում է սովորողների ընկալումը և կարող է օգնել՝ չափելու ուսանողների նորարարությունն ու գնահատումը: | Իրականում, բացահայտ կերպով սիմուլյացիոն ուսումնառության փորձառություն է: |
| Լաբորատոր զեկույց | Լաբորատոր հետազոտական գործունեության փաստաթղթագրված զեկույց: | Խթանում է քննադատական մտածողությունն ու գնահատումը, ինչպես նաև պաշտոնապես ձևակերպում է պլանավորման և հետազոտական մեթոդների հարմարեցման գործընթացը: | Լաբորատոր զեկույցների մշակման ներուժը կարող է խանգարել փորձարկման գործընթացում: |
| Հանրագիտարանային հոդվածների մշակում | Բարդ հասկացությունների, գաղափարների կամ տեսությունների հակիրճ սահմանումների և բացատրությունների մշակում: | Խթանում է լեզվական հմտությունների, տեքստերի խմբագրման և մտքերի հակիրճ արտահայտման կարողությունների զարգացումը: Շեշտադրվում են էական կետերը: | Իրականում շատ ավելի կենտրոնանում է տեքստի, քան հասկացությունների և գաղափարների վրա: |
| Քննադատական ակնարկ | Գրականության ուսումնասիրություն՝ խնդրահարույց հայեցակարգերի, գաղափարների և տեսությունների հստակ շեշտադրումով: | Խթանում է հայեցակարգերի և գաղափարների վիճարկումն ու քննադատությունը: Կարող է նպաստել վստահության և քննադատական մտածողության զարգացմանը: | Քննադատական մտածողության արդյունավետ խթանումը կարող է բարդ լինել՝ առանց քննադատության համար բաց աղբյուրների: |
| Հիմնախնդրի լուծում | Հիմնախնդրի ուսումնասիրման և հանգուցալուծման խելամիտ տարբերակների մշակման բաց հնարավորություն: | Կարող է խթանել հիմնախնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցումն ու նորարարությունը: Կարող է հարմարեցվել առարկայի համատեքստին: | Համակողմանի մոտեցման ու նորարարության խթանումը կարող է դժվար լինել: |

| | | | |
|---|---|---|---|
| Անհատական զարգացման ծրագիր | Համակարգված պլանի մշակում սահմանված գիտելիքի և հմտությունների զարգացման համար: | Կարող է խթանել ավելի անհատականացված պլանավորումը և ուսանողի առաջընթացի ու ձեռքբերումների՝ դրանից բխող իմաստավորումը: | Հնարավոր է, որ պլանավորումն ավելի վերացական ու իդեալականացված դառնա: |
| Ռեֆլեկտիվ օրագիր | Կարող է մշակվել բլոգի ձևաչափով, արտացոլում է ուսումնառության տվյալ ոլորտում ունեցած առաջընթացը՝դրա վերբերյալ դատողությունների ու կշռադատման միջոցով: | Լավ համատեքստ է՝ ուսումնառության նկատմամբ ավելի կշռադատված մոտեցում ձևավորելու համար: | Հնարավոր է, որ պաշտոնականության և քննադատականության պակաս լինի: |
| Նախագիծ | Երկարատև պլանավորում և իրականացում պահանջող գործունեություն ուսումնառության բաց, հաճախ սովորողի կողմից ընտրվող համատեքստում: Արդյունքը կարող է լինել որոշակի տեքստ, արտեֆակտ (ձեռակերտ արդյունք), լուսապատկերաշար և այլն: | Կարող է գիանատել ուսանողների ստեղծագործական և նորարարական գաղափարները, որևէ առարկայի ըմբռնման կիրառումը այլընտրանքային խնդիրներ լուծելու համար: | Հնարավոր է, որ նախագծի մշակումը անհատապես իրագործվելիս հանգեցնի մեկուսացման, իսկ խմբով իրականացվելիս թուլացնի թիմային աշխատանքի դինամիկան: |
| **Գործնական հմտությունների գնահատում** | Հատկապես ֆիզիկական գործունեություն պահանջող և արտեֆակտով (ձեռակերտ արդյունքով) կամ որևէ իրադարձությամբ ավարտվող ոչ տեքստային գնահատվող աշխատանքի ընդհանուր նկարագիր: | | |
| ***Հատկորոշում*** | ***Նկարագրիչ*** | ***Առավելություններ*** | ***Դատողություններ*** |
| Անհատական ներկայացում | Անհատական ներկայացում՝ նյութական միջոցների կիրառմամբ՝ արտացոլելու գիտելիքները, ընկալումն ու խոր ըմբռնումը: | Հուզական առումով մեծ լարվածություն առաջացնող ձևաչափ է, որը պահանջում է խորքային ուսումնառություն, փոխանցելի հմտությունների զարգացում և դրանց խթանում: | Որոշ ուսանողների կարող է չափազանց մեծ լարվածության ու վախի մեջ պահել: |
| Խմբային ներկայացում | Խմբով իրականացված նախագծի արդյունքների կամ հետազոտական աշխատանքի ներկայացում: | Ավելի դինամիկ և փոխգործուն է, կարող է խթանել բաժնեկցված ուսումնառությունը: | Ներկայացման համատեքստում կարող է անհատական անհանգստությունը նվազեցնելու օգտակար միջոց լինել: |
| Նախագծի ներկայացում | Սահմանված առաջադրանքի նկարագրին համապատասխան առաջարկվող հայեցակարգի ներկայացում՝ մասնագիտական դրույթների վրա կենտրոնացմամբ: | Մասնագիտական առումով հիմնավորված է և հնարավորություն է տալիս ձևավորելու փոխանցելի հմտություններ: Արդյունաբերության տվյալ ճյուղը ներկայացնող գործընկերների ներգրավման ներուժ ունի: | գնահատումն իրականացնելու համար «իրական կյանքից» վերցված համատեքստ մոդելավորելը կարող է բարդ լինել նյութատեխնիկական և կազմակերպչական տեսանկյունից՝: |
| Պրակտիկա | Պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների գնահատում: | Դինամիկ է և ուսումնառությունը ներառում է տարբեր համատեքստերի ու տիրույթների մեջ: | Նյութատեխնիկական ապահովման առումով կազմակերպչական բարդ խնդիրների լուծում է պահանջում: |
| Դիտման զեկույց | Դիտման ընթացքում իրականացված հետազոտական որոշակի գործողությունների փաստաթղթավորում: | Կարող է հետազոտության (դիտման) առարկա հանդիսացող իրադարձությունների և գործունեության մեջ ավելի խոր ներգրավում խթանել: | Դիտման գործընթացի տարբեր փուլերում իրականացվող փաստաթղթավորումը կարող է զայրացուցիչ լինել: |
| Սիմուլյացիա (իրավիճակի մոդելավորում) դերային խաղի միջոցով | Տրված ուսումնական սցենարի սիմուլյացիա և գաղափարների նախագծման հնարավորություն: | Շատ դինամիկ է: Խրախուսում է խորքային ուսումնառությունը: | Սիմուլյացիան, իմպրովիզացիան և ավելի թատերականացված ձևաչափերը կարող են բարդ լինել որոշ սովորողների համար: Կարող է ավելի հարմար լինել որոշ առարկաների: |
| Ցուցահանդես կամ ցուցադրություն | Հաճախ կապվում է արվեստի ուղղվածությամբ առարկաների հետ, բայց հարմար է կիրառել նաև այլ առարկաների շրջանակում: Գործնական արդյունքները | Գերազանց համատեքստ է արդյունքների տարածման և քննադատության համար: | Նյութատեխնիկական ապահովման տեսանկյունից կարող է բարդ լինել, սակայն տեխնոլոգիաները ավել շատ վիրտուալ մոտեցումների |

| | | | |
|---|---|---|---|
| | ներկայացվում կամ ցուցադրվում են ավելի լայն գնահատանքի համար: | | հնարավորություն են ստեղծում: |
| Ստեղծագործական պորտֆոլիո | Գլխավորապես կապված լինելով արվեստի ուղղվածությամբ առարկաների հետ՝ պորտֆոլիոն միավորում է սահմանված պահանջներին համապատասխան կատարված ողջ աշխատանքը: | Մեծապես անձնավորվող և փոխանցելի արդյունքներ: Հեշտությամբ հարմարեցվող շատ ճկուն ձևաչափ: | Հնարավոր է, որ դյուրափոփոխ արդյունքները դժվարացնեն ամփոփիչ գնահատումը: |
| Կատարողական արվեստ | Կապված լինելով գլխավորապես արվեստի ուղղվածությամբ առարկաների հետ՝ կատարողական արվեստի միջոցառումներով ստուգում են ձեռք բերված տեխնիկական հմտությունները լսարանի կողմից ճնշման և պաշտոնական գնահատման պայմաններում կիրառելու սովորողի ունակությունը: | Ուղղակիորեն համապատասխանում է մասնագիտական համատեքստին և ուսումնառության մոտիվացիայի կարևոր աղբյուր է: | Կարող է բարդ լինել, եթե չուղեկցվի հաղթահարման մեխանիզմների և նախապատրաստման եղանակների/մեթոդների անհրաժեշտ զարգացմամբ: |
| Պրակտիկա | Պաշտոնական, ղեկավարվող և վերահսկվող աշխատանք մասնագիտական ոլորտում: | Աշխատանքային փորձի զարգացման և զբաղունակության մեծացման գերազանց հնարավորություն: | Դժվար է կազմակերպել մեծ խմբերի դեպքում, ուսումնառության կառավարումը կարող է բարդ լինել կազմակերպչական և նյութատեխնիկական ապահովման տեսանկյունից: |
| Փորձնական հարցազրույց | Կոնկրետ աշխատանքի, մասնագիտական գործունեության ոլորտում հնարավոր դերի և այլ հնարավորությունների հետ կապված փորձնական հարցազրույցի կազմակերպում: | Գերազանց համատեքստ է փոխանցելի հմտությունների զարգացման համար: | Սիմուլյացիան(իրավիճակի մոդելավորումը) կարող է մակերեսային ներգրավման պատճառ դառնալ: |
| **Քննություն** | Սեղմ ժամկետներում և ժամանակի սահմանափակմամբ իրականացվող անհատական գնահատման հակիրճ նկարագիր: Թեև ավանդական թղթային քննությունները և բազմակի ընտրությամբ թեստերը շարունակում են արժեքավոր միջոց լինել ՝գնահատման արդյունավետությունը և արդյունքների կայունությունը (փոքր տատանումները) ապահովելու հարցում, սակայն քննությունների գնահատման բազմաթիվ այլ ձևեր ևս կան: | | |
| ***Հատկորոշում*** | ***Նկարագրիչ*** | ***Առավելություններ*** | ***Դատողություններ*** |
| Փակ գիրք | Քննության ավանդական մեթոդ, որը պահանջում է փաստերի և տեղեկատվության մտաբերում՝ գիտելիքի որոշակի համադրումով: | Գնահատման արդարություն և խմբի գնահատման արդյունքների հետևողականություն: Գնահատման արդյունքների արդյունավետ մշակում: | Կարող է վանել որոշ ուսանողների, նաև հանգեցնել հմտությունների առավել նեղ շրջանակի ձևավորման և մակերեսային ուսումնառության: |
| Հրապարակված քննական հարցեր | Ֆորմալ քննություն՝ նախապես հրապարակված քննական հարցերով և նախապատրաստվելու հնարավորությամբ: | Ավելի արդյունավետ է ի ցույց դնում գիտելիքի կիրառման կարողությունները «իրական կյանքում» և կարող է նվազեցնել հուզմունքն ու վերացական մոտեցումները քննության նախապատրաստման նկատմամբ: | Կարող է խորացնել մակերեսային ուսումնառության խնդիրները: |
| Բաց գիրք | Քննություն, որը թույլ է տալիս օգտվել հետազոտական աղբյուրներից: | Խթանում է գիտական մոտեցումների մշակումը և ավելի բարդ տեղեկատվության յուրացումը: | Կարող է թուլացնել բովանդակության կիրառման նկատմամբ պատասխանատվությունը և հանգեցնել մակերեսային ուսումնառության: |
| Էսսեի վրա հիմնված քննություն | Տրված հարցադրմանն արձագանքող դատողական տեքստի շարադրում՝ սահմանափակ ժամանակահատվածում: | Ճկուն է և կարող է անհատականացվել: | Անարդյունավետ է գնահատման տեսանկյունից, բայց կարող է ավելի խորքային ուսումնառություն խթանել նախապատրաստական հետազոտության գործընթացում: |
| Բազմակի ընտրությամբ թեստեր | Մի շարք տարբերակներից ճիշտ պատասխանի ընտրությամբ քննություն: | Արդյունավետ է թեստերի լրացման և գնահատման արագության տեսանկյունից: | Ուսումնառությունը կարող է մակերեսային լինել, իսկ արդյունքները՝ ոչ ճշգրիտ |

| | | | |
|---|---|---|---|
| | | Հնարավորություն է տալիս համապատասխան տեխնոլոգիաների օգտագործմամբ գնահատման գործընթացն ավտոմատացնելու: | (պատասխանը գուշակելու հետևանքով): |
| Համակարգչային քննություն | Ընդհանուր եզրույթ, որը բնութագրում է համակարգչային ծրագրերի ինտեգրված կիրառությունը՝ ավելի դինամիկ քննական ձևաչափեր մշակելու համար: Կարող է ներառել քննության ավելի դինամիկ գրաֆիկական, տեսագրական, աուդիո- և մեդիա-բովանդակություն: | Ավելի ճկուն և դինամիկ քննություն է: | Համակարգչային գնահատման գործընթացի մշակումը կարող է ժամանակատար լինել և կազմակերպչական առումով բարդ: |
| Ժամանակի սահմանափակմամբ գործնական քննություն | Կարող է մեծ թվով առարկաների շրջանակներում կիրառվել: Ժամանակի սահմանափակմամբ գործնական խնդիրների լուծումը կապվում է մասնագիտական որոշակի գիտելիքների և հմտությունների հետ: | Մասնագիտական առումով համապատասխան և դինամիկ գնահատում է: | Կազմակերպչական և նյութատեխնիկական ապահովման տեսանկյունից կարող է բարդ լինել և զգալի ռեսուրսներ պահանջել: |
| Բանավոր քննություն | Գնահատում է ուսանողների՝ բարդ գաղափարները համակարգված ու տրամաբանված ներկայացնելու կարողությունը: | Ճկուն է և կարող է ածնավորվել: | Մեծ խմբերի դեպքում կարող է ժամանակատար լինել: |
| Լսարանային հարցում | Արագ ինքնագնահատում, որն օգտակար է շարունակական ուսումնառության զարգացման համար: | Արագ հետադարձ կապ է ապահովում ինքնագնահատման միջոցով: Տալիս է հնարավորություն՝ մշակելու ավելի դինամիկ մոտեցումներ՝ մոդելավորելով հեռուստատեսային խաղ-վիկտորինաներ: | Արագ կազմակերպումը կարող է դժվար լինել: |
| Ուսանողների մշակած հարցաշար | Ուսանողների կողմից մշակված հարցաշար, որը ներառում է նրանց համագործակցության արդյունքում հավանության արժանացած անհատական հարցերը: | Գնահատման դինամիկ, մասնակցային և հաճելի ձևաչափ է: | Կազմակերպումը կարող է բարդ լինել և չարտացոլել անհրաժեշտ բոլոր թեմաները: |
| Բանավեճ | Ֆորմալ քննարկման գործընթաց է, որի ընթացքում քննվում են տրված թեմաներն ու առարկաները: | Կարող է խթանել քննադատական մտածողությունը, հռետորական հմտությունները և տարբեր տեսակետների գնահատումը | Ժամանակատար է և կարող է նպաստել ճարտարախոս ուսանողների հանդեպ կանխակալ վերաբերմունքի ձևավորմանը: |
| Թեզի պաշտպանություն | Քննարկման վրա հիմնված ֆորմալ գնահատում, որը, որպես կանոն, ուղեկցվում է թեզի/ատենախոսության գնահատման գործընթացով: | Նպատակահարմար ձև է՝ գնահատելու գիտելիքի տիրապետումը, հանձնված առանձին փաստաթղթերի բովանդակության մշակման ինքնուրույնությունը, և գիտելիքի ու գաղափարների համադրումը իրական ժամանակում: | Կազմակերպչական և նյութատեխնիկական ապահովման կարող է բարդ լինել ուսանողների մեծ լսարաններում կազմակերպելու համար: |

**Բակալավրի կրթական աստիճանում կիրառվող գնահատման ձևեր**

| | |
|---|---|
| **ՁԵՎԱՎՈՐՈՂ** | Նպաստում է ուսումնառությանը հետադարձ կապի և առաջադիմության ուղղորդման միջոցով: Ձևավորող գնահատումը նպաստում է ուսանողների շարունակական առաջխաղացմանը և չի ազդում վերջնական գնահատականների վրա: |
| **ԱՄՓՈՓԻՉ** | Ամփոփիչ գնահատման միջոցով ձևավորվում են վերջնական գնահատականները, ինչպես նաև ավարտական աստիճանների շնորհումը: |
| **ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ** | Գնահատման ձև՝ միտված գնահատելու ուսումնառության գործընթացում ուսանողների ձեռքբերումները, ինչպես նաև սահմանելու գիտելիքի, հմտությունների, ընկալման և կարողությունների՝ բարելավման կարիք ունեցող ոլորտները: Հայտորոշիչ գնահատումը հաճախ զուգորդվում է ուսումնառության սկզբում իրականացվող տարբերակված հոսքերի որոշման հետ: |
| **ԴԻՆԱՄԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ** | Գնահատում է ուսումնառական ներուժը՝ կիրառելով անծանոթ մարտահրավերներ և թեմաներ: Դինամիկ գնահատումն օգտակար է հայտորոշման տեսանկյունից, քանի որ հնարավորություն է տալիս գնահատելու ուսանողի սովորելու կարողությունը տարբեր համատեքստերում: |

| | |
|---|---|
| ՍԻՆՈՊՏԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ | Ուսումնական ծրագրերի իրականացման արդյունքում ձևավորված գիտելիքների, հմտությունների և կարողությունների սինթեզի գնահատում:: Հաճախ գնահատման այլ ձևերի բաղադրիչ է լինում և կապվում է բակալավրի աստիճանի ավարտական փուլում իրականացվող հետազոտական աշխատանքի հետ: Սինոպտիկ գնահատումն ուսումնասիրում է տարբեր ոլորտներում իրկանացված ուսումնառության արդյունքների համադրումը: |
| ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՒՄ | Սովորողների ձեռքբերումները չափվում են ըստ սահմանված չափանիշների և արդյունքների, որոնք համահունչ են նախանշված բենչմարքներին: Անհատ սովորողի առաջադիմությունը չափվում է՝ չափանիշի համեմատությամբ, այլ ոչ թե ուսումնառողների խմբում առաջադիմության ընդհանուր մակարդակի : |
| ՕԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ | Գնահատում, որը կապվում է օբյեկտիվորեն չափելի արդյունքների հետ, օրինակ՝ քննական հարցերում առկա ամսաթվերի, տերմինների, կամ վերնագրերի : |
| ՆՈՐՄԱՏԻՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ | Գնահատում, որը շեշտադրում է ուսանողի առաջադիմության մակարդակը՝ ուսանողների ավելի մեծ խմբի առաջադիմության համեմատ: Առաջադիմությունր չափվում է խմբի համեմատությամբ, այլ ոչ նախասահմանված գնահատման սանդղակով: |

# ՀԱՎԵԼՎԱԾ 9.
# ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

| **Շրջանակի նկարագրիչ** | **ՄԿԾ ուսումնառության արդյունքներ**<br>Ծրագրից բարեհաջող ավարտելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝ | **Դասավանդման առաջարկվող ռազմավարություններ** | **Գնահատման հնարավոր ռազմավարություններ** | **Մոդուլ/ուսումնական միավոր (ներ)** |
|---|---|---|---|---|
| **Գիտելիքի ծավալը**<br>Մասնագիտական ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների վերաբերյալ ընդհանուր գիտելիք և իմացություն: | • Ցուցաբերել խորքային գիտելիքներ և քննադատական ընկալում հոգեբանության և դրա կիրառման ոլորտում (հատկապես մարդ – համակարգիչ փոխազդեցության համատեքստում):<br>• Ճանաչել տեսության և փաստացի ապացույցների միջև առկա փոխադարձ կապը: | • Դասախոսություններ/ վերապատրաստումներ հոգեբանության ոլորտում հետազատություն կատարելու, այդ թվում նաև հղումներ անելու վերաբերյալ:<br>• Դիտման եղանակով կատարվող ուսումնասիրություններ:<br>• Փորձարարական ուսումնառություն՝ տեխնոլոգիաների օգտագործմամբ:<br>• Դասախոսություններ հոգեբանների հետաքրքրության հիմնական ոլոտների վերաբերյալ:<br>• Ուսանողների և դասախոսների վարած սեմինարներ:<br>• Գրականության ուսումնասիրություն: | • Հոգեբանական լաբորատոր զեկույցներ դիտման եղանակով իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ:<br>• Համապատասխան թեմաներով էսսեներ:<br>• Տեխնոլոգիաների գործնական կիրառման մշակում և ներկայացում, օրինակ՝ բլոգ, վիքի, պաստառ, լուսապատկերաշար: | Բոլոր մոդուլները |
| **Գիտելիքի տեսակը**<br>Տվյալ մասնագիտության և հարակից ոլորտների տեսությունների ու մեթոդների վերաբերյալ համակողմանի գիտելիք և իմացություն, որոնց մի մասը այդ բնագավառի վերջին ձեռքբերումներն են: | • Ցուցաբերել խորքային գիտելիքներ և քննադատական ընկալում հոգեբանության և վերջինի կիրառման ոլորտում (հատկապես՝ մարդ – համակարգիչ փոխազդեցության համատեքստում):<br>• Ճանաչել տեսության և փաստացի ապացույցների միջև առկա փոխադարձ կապը:<br>• Զանազանել քանակական և որակական մեթոդները: | • Սեմինարներ, որոնք վարում են և՛դասախոսները, և՛ ուսանողները:<br>• Ինտերնետի օգտագործման՝ խնդիրների լուծմանը միտված հարցեր:<br>• Տեխնոլոգիաների օգտագործման ուսումնասիրություններ դիտման եղանակով:<br>• Գրականության ուսումնասիրություն:<br>• Տեխնոլոգիական լաբորատորիաներում կատարվող առաջադրանքներ: | • Համապատասխան թեմաներով էսսեներ:<br>• Զեկույցներ, քաղաքականության հայեցակարգի համառոտագրի մշակում՝ սահմանված առաջադրանքի հիման վրա:<br>• Տեխնոլոգիաների հետագա կիրառման սցենարների մշակում և ներկայացում:<br>• Հետազոտական գրականության քննադատական վերլուծություն: | Բոլոր մոդուլները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Նոու հաու և հմտություն. վերաբերելիություն** Պլանավորման, մշակման, տեխնիկական և/կամ կառավարման տարբեր գործառույթների շրջանակում անել համապատասխան դատողություններ՝ կապված ապրանքների, ծառայությունների, գործառնությունների կամ գործընթացների հետ: | • Զանազանել տարբեր տեսակետները՝ հիմվելով ոլորտում ունեցած գիտելիքների վրա:<br>• Ճանաչել տեսության և փաստացի ապացույցների միջև առկա փոխադարձ կապը:<br>• Կիրառել վարքագծի մասին գիտության ոլորտում ունեցած գիտելիքներն ու ընկալումը կյանքի իրական իրավիճակներում:<br>• Կիրառել մի շարք հետազոտական հմտություններ և գիտական մեթոդներ վարքագիծը ուսումնասիրելու նպատակով:<br>• Ցուցաբերել ընդհանրական հմտությունների լայն շրջանակ, ներառյալ՝ հաղորդակցման, տեղեկատվության մշակման, թիմային աշխատանքի, քննադատական և ստեղծագործական մտածողության, համակարգչային, և ինքնուրույն ուսումնառության հմտությունները:<br>• Օգտագործելմի շարք գործիքներև մեթոդներ՝ տվյալների վիճակագրական ուսումնասիրության համար:<br>• Տարբերակել քանակական և որակական մեթոդները:<br>• Դրսևորել ստեղծագործական մոտեցում նոր և առկա տեխնոլոգիաները կրթական նպատակներով, ինչպես նաև արդյունաբերության և այլ ոլորտներում կիրառելիս: | • Խնդիրների լուծում:<br>• Տեխնոլոգիաների և հետազոտության վերաբերյալ աշխատաժողովներ:<br>• Հետազոտական նախագծի մշակում և իրականացում:<br>• Նախատիպերի ստեղծում:<br>• Նախատիպերի գնահատում: | • Զեկույցներ, քաղաքականությա ն հայեցակարգի համառոտագրի մշակում՝ սահմանված առաջադրանքի հիման վրա:<br>• Հետազոտական նախագիծ:<br>• Տեխնոլոգիաների հետագա կիրառման սցենարների մշակում և ներկայացում:<br>• Նախագծի շրջանակում կատարված աշխատանքի գնահատում և նախատիպերի ստեղծում: | Բոլոր մոդուլները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Նոու հաու և հմտություն. Ծավալ** Տիրապետում է մասնագիտական ոլորտում անհրաժեշտ հմտությունների համախմբին և գործիքներին, կիրառելով և հարմարեցնելով իր զարգացած հմտություններն ու գործիքակազմը՝ ղեկավարի անմիջական ուղղորդմամբ իրականացնում է հետազոտություն, ծավալում մասնագիտական կամ նորարարական տեխնիկական գործունեություն: | • Զանազանել տարբեր տեսակետները՝ հիմվելով առարկայից ունեցած գիտելիքների վրա:<br>• Ճանաչել տեսության և փաստական ապացույցների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը:<br>• Կիրառել վարքագծային գիտությունների ոլորտում ունեցած գիտելիքներն ու ընկալումը կյանքի իրական իրավիճակներում:<br>• Կիրառել մի շարք հետազոտական հմտություններ և գիտական մեթոդներ՝ վարքագիծը ուսումնասիրելու նպատակով:<br>• Ցուցաբերել ընդհանրական հմտությունների լայն շրջանակ, ներառյալ՝ հաղորդակցման, տեղեկատվության մշակման, թիմային աշխատանքի, քննադատական և ստեղծագործական մտածողության, համակարգչային և ինքնուրույն ուսումնառության հմտությունները:<br>• Օգտագործել մի շարք գործիքներ և մեթոդներ՝ տվյալների վիճակագրական ուսումնասիրության համար:<br>• Տարբերակել քանակական և որակական մեթոդները: | • Դասախոսություններ/ վերապատրաստումներ հոգեբանության ոլորտում հետազատություն կատարելու, այդ թվում նաև հղումներ անելու վերաբերյալ:<br>• Գրականության ուսումնասիրություն:<br>• Հոգեբանական գիտափորձերի իրականացում:<br>• Գիտափորձերի նախագծում/մշակում:<br>• Դիտման եղանակով կատարվող ուսումնասիրություններ:<br>• Կիրառելիության ուսումնասիրություններ:<br>• Նախատիպերի ստեղծում:<br>• Նախատիպերի գնահատում: | • Լաբորատոր զեկույցներ,<br>• Սեղմագրեր, պաստառներ, կայքեր, վիքիներ:<br>• Գրականության ուսումնասիրություններ:<br>• Հետազոտական աշխատանք:<br>• Նախագծային աշխատանքի գնահատում և նախատիպերի ստեղծում: | Բոլոր մոդուլները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարողություն** **Համատեքստը** Հետազոտական, տեխնիկական կամ մասնագիտական առաջանցիկ գործունեության մեջ կիրառել արդիական հմտություններ՝ ստանձնելով որոշումների կայացման ողջ պատասխանատվությունը, տարբեր համատեքստերում փոխանցել և կիրառել հայտորոշիչ և ստեղծագործական հմտություններ: | • Զանազանել տարբեր տեսակետները՝ հիմվելով ոլորտում ունեցած գիտելիքների վրա:<br>• Ճանաչել տեսության և փաստացի ապացույցների միջև առկա փոխադարձ կապը:<br>• Կիրառել վարքագծի մասին գիտության ոլորտում ունեցած գիտելիքներն ու ընկալումը կյանքի իրական իրավիճակներում:<br>• Կիրառել մի շարք հետազոտական հմտություններ և գիտական մեթոդներ վարքագիծն ուսումնասիրելու նպատակով:<br>• Ցուցաբերել ընդհանրական հմտությունների լայն շրջանակ, ներառյալ՝ հաղորդակցման, տեղեկատվության մշակման, թիմային աշխատանքի, քննադատական և ստեղծագործական մտածողության, համակարգչային, և ինքնուրույն ուսումնառության հմտությունները:<br>• Դրսևորել ստեղծագործական մոտեցում նոր և առկա տեխնոլոգիաները կրթական նպատակներով, ինչպես նաև արդյունաբերության և այլ ոլորտներում կիրառելիս: | • Համացանցի օգտագործման խնդիրների լուծմանը միտված հարցեր:<br>• Տեխնոլոգիաների օգտագործման ուսումնասիրություններ՝ կատարված դիտման եղանակով:<br>• Գրականության ուսումնասիրություն:<br>• Տրված սցենարում իրավիճակի վերլուծություն և լուծման առաջարկ:<br>• Գիտափորձերի նախագծում վարկածները ստուգելու նպատակով:<br>• Տեսության կիրառում ծանոթ աշխատանքային կամ սոցիալական համատեքստում:<br>• Սեմինարներ: | • Զեկույց, տրված սցենարին համապատասխան քաղաքականության մշակում:<br>• Փորձնական նմուշների ներկայացում:<br>• Տեխնոլոգիաների կիրառման սցենարների մշակում և ներկայացում:<br>• Գործնական համատեքստին առնչվող էսսե/լուսապատկեր աշար/բլոգ/հետազոտական զեկույց: | Հետազոտական մեթոդներ և վիճակագրություն<br>•Կուրսային/ավարտական հետազոտական նախագիծ<br>•SS խմբային նախագիծ/IDEA նախագիծ<br>•Վեբ ծրագրերի մշակում<br>•Ուսումնառություն և դասավանդում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարողություն Դերը**<br><br>Որոշակի ուղղորդման պայմաններում արդյունավետ գործունեություն ծավալել որակավորված մասնագետների հետ հավասարակցային հարաբերությունների հիման վրա, ղեկավարել կառուցվածքային տեսանկյունից բարդ, տարասեռ բազմաթիվ խմբեր: | • Ճանաչել տեսության և փաստացի ապացույցների միջև առկա փոխադարձ կապը:<br>• Կիրառել վարքագծային գիտության ոլորտում ունեցած գիտելիքներն ու ընկալումը իրական կյանքի տարբեր իրավիճակներում:<br>• Ցուցաբերել ընդհանրական հմտությունների լայն շրջանակ, ներառյալ՝ հաղորդակցման, տեղեկատվության մշակման, թիմային աշխատանքի, քննադատական և ստեղծագործական մտածողության, համակարգչային և ինքնուրույն ուսումնառության հմտությունները:<br>• Հավատարիմ լինել էթիկական և մասնագիտական վարքագծի բարձր չափորոշիչներին: | • Համացանցի օգտագործման խնդիրների լուծմանը միտված հարցեր:<br>• Տեխնոլոգիաների օգտագործման ուսումնասիրություններ դիտման միջոցով:<br>• Հետազոտության իրականացում, օրինակ՝ հարցումներ, ֆոկուս խմբեր:<br>• Բլոգի, բանավիճային խմբի, Վիքի էջի մշակում և դրանց համար պատասխանատվության ստանձնում:<br>• Հետազոտական նախագիծ:<br>• Հետազոտական նախագծի մշակում և իրականացում: | • Հետազոտական զեկույցներ:<br>• «Դեր» կոմպետենցիայի կանոնավոր գնահատում ուսանողի և փորձագետների կողմից: | • ՀՀետազոտության մեթոդներ և վիճակագրություն<br>• ՀԱվարտական հետազոտական նախագիծ<br>• SSS խմբային նախագիծ<br>• ՈՈւսումնառություն և դասավանդում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարողություն. Սովորել՝ ինչպես սովորել**<br>Սովորել գործել ուսումնական բազմազան և անծանոթ համատեքստերում, սովորել առաջադրանքները կատարել ինքնուրույնաբար՝ պահպանելով մասնագիտական պատասխանատվությունն ու էթիկայի նորմերը: | • Զանազանել տարբեր տեսակետները՝ հիմվելով առարկայից ունեցած գիտելիքների վրա:<br>• Դրսևորել ընդհանրական տարատեսակ հմտություններ ներառյալ՝ հաղորդակցման, տեղեկատվության մշակման, թիմային աշխատանքի, քննադատական և ստեղծագործական մտածողության, համակարգչային և ինքնուրույն ուսումնառության հմտությունները:<br>• Զարգացնել հոգեբանության և այլ ոլորտներում շարունակական ուսումնառության կարողություններ:<br>• Հավատարիմ լինել էթիկական և մասնագիտական վարքագծի բարձր չափորոշիչներին:<br>• Դրսևորել ստեղծագործական մոտեցում նոր և առկա տեխնոլոգիաները կրթական նպատակներով, ինչպես նաև սոցիալ-տնտեսական միջավայրում կիրառելիս: | • Խնդիրիների լուծում:<br>• Իրական կյանքի ուսումնասիրություններ՝ դիտման եղանակով:<br>• Խմբի վիքի էջի, բլոգի, վեբկայքի օգտագործում՝ գործնական առցանց համայնք ստեղծելու համար:<br>• Համապատասխան առցանց ռեսուրսների օգտագործում այլ ուսանողների հետ և Վիքի էջերում աշխատելիս, քննարկումներին (ֆորումներին) մասնակցելիս: | • Ուսումնառության ինքնագնահատում և հավասարակիցների գնահատում""""<br>• Ուսումնառության անցած ուղու նկարագիր և հետագա ուսումնառության ծրագրի մշակում: | • Հետազոտական մեթոդներ և վիճակագրություն<br>• Հիմնական հետազոտական ծրագիր<br>• ՏՏ նախագիծ /խմբային նախագիծ<br>• Ուսումնառություն և դասավանդում<br>• Մարդ – համակարգիչ փոխազդեցություն<br>• Տեղեկատվության մշակում և մուլտիմեդիա<br>• Ծրագրային ապահովման մշակում |